ՄԱՅՐԵՆԻԻ(ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ) ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.Այս սրտառուչ ու գեղեցիկ պատմությունը ինձ շատ դուր եկավ: Ես հասկացա, որ պետք է սիրել բոլոր լավ ու բարի մարդկանց, պետք է կարողանալ ներել չար մարդկանց և օգնել նրանց՝ լավը դառնալու: Հասկացա, որ իմ սրտում միշտ տեղ կլինի աշխարհի բոլոր լավ մարդկանց համար:
2.Փոքրիկ, փոքրիկ- փոքրիկ, մաքուր, ամբողջ- ամբողջ, մեծ, կեսը դատարկ մնացած:
3.Դատարկ սիրտը դատարկ ծաղկամանի նման տգեղ կլինի:
Սիրտը հյուրանոց չէ, սիրտը ճնճղուկի բույն չէ:
Փոքրիկ- փոքրիկ սիրտս՝ մի փոքրիկ, սիրուն տնակի պես…
Հայտնի չէ՝սա սի՞րտ է, թե՞ ծով…
4.Իհարկե, երբեք չի լցվի, քանի որ մեզ միշտ էլ կհանդիպեն նոր մարդիկ, նոր ընկերներ, որոնց նույնպես կարող ենք տեղավորել մեր սրտում:Եթե փոքրիկ տղայի սիրտը լցվի, նա մենակ կմնա, և կյանքը կդառնա միօրինակ ու ձանձրալի:
5.Լավ- ընտիր, լավորակ, ազնիվ, բարի
հարուստ- ունևոր, մեծատուն
փոքրիկ- կրտսեր,պուճուր, մանր, քիչ, աննշան
բարի- անչար, գթասիրտ,ներողամիտ, բարեհոգի,բարեսիրտ
միանգամից- կտրուկ, շեշտակի, հանկարծակի
6. Հրաժարվեն վատ լինելուց, վատ արարքներ կատարելուց, երեխաներին չնեղացնեն, կենդանիներին չսպանեն, ոչ մեկի նկատմամբ բռնություն չգործադրեն, ծովը չկեղտոտեն:
7.Տղայի սիրտը նմանվել էր մի մեծ քաղաքի, դպրոց ուներ,հիվանդանոց ուներ,զորանոց ուներ, փողոց, թաղ, պողոտա ուներ… Վերջապես տղայի սրտում տեղավորվել էին նրա ամենասիրելի ու մտերիմ մարդիկ:
8.Այսքան փոքրիկ սիրտն, ախր, ինչպե՞ս է, որ երբեք չի լցվում: Դե լավ, դա ինձ չի վերաբերում: Երբ մեծանամ, գուցե հասկանամ, թե ինչո՞ւ է այդպես, սակայն հիմա, մինչև այն պահը, երբ դեռ սրտիս մեջ տեղ կա, պետք է այդ տեղը նվիրեմ լավ ու բարի մարդկանց:
Սիրտը հենց դրա համար է, ճիշտ չէ՞:
Իմ սիրտը պատկանում է աշխարհի բոլոր- բոլոր լավ մարդկանց՝ աշխարհի այս ծայրից մինչև մյուս ծայրը:
9. Եթե մարդու սիրտը դատարկ մնա, նա կդառնա անպետք մի իր, որևէ հարազատ կամ ընկեր չի ունենա, մենակ կմնա այս մեծ աշխարհում, կտխրի ու կվշտանա: Չէ՞ որ մենակ մարդը ամենատխուր մարդն է:
10. Սրտիս ճիշտ կեսի մեջ տեղավորվածները հանգիստ նստել, ասում- խոսում էին, և ոչ մեկը չէր բողոքում տեղի նեղվածքից:
11.Տատիկը սիրտը համեմատում է դատարկ ծաղկամանի հետ, որն առանց ծաղիկների շատ տգեղ է, իսկ հայրիկը սիրտը հաեմատում է հյուրանոցի հետ, որտեղ կարող են հյուրընկալվել շատ կարճ ժամանակով և թռչնի բնի հետ, որը գարնանը վերաշինվում է, իսկ աշնանը փլվում քամիներից:

12. Տղայի սրտի մեջ առաջինը տեղավորվում են ամենահարազատ ու սիրելի մարդիկ՝ մայրիկը, հայրիկը, քույրիկը, եղբայրը, տատիկը, պապիկը, որովհետև տղան ամենից շատ նրանց հետ է կապված, նրանց հետ է անցնում իր գեղեցիկ մանկությունը:
13.ա) հայրենիքի համար կռված ու կեղտոտ թշնամուն մեր հողից, մեր երկրից, մեր տնից դուրս վռնդած զինվորները
բ) այլև չար մարդիկ, եթե բարիանան
գ) անտառները, արտերը,ձկները, եղնիկները, փղերը և շատ ուրիշ բաներ… Ամբողջ աշխարհը:
14.Հարուստ հորեղբայրը չտեղավորվեց տղայի սրտում, քանի որ չկարողացավ բաժանվել իր փողի սնդուկից: Նա նյութապաշտ էր և ընչաքաղց. նրա համար իր ունեցվածքը ավելի թանկ էր, քան մարդկային մնացած հարաբերությունները:
15. Այս հարցին պետք է պատասխանի մասնակիցը:
16. Ծաղկաման- ծաղիկ –ի մտածել – միտ –ի> ը նվիրել- նվեր – ե> ի
Տնակ- տուն- ու> ը հատկացնել- հատուկ-ու փոքրիկ- փոքր –ը
Գարնան- գարուն-ու մշտապես- միշտ-ի>ը շինել-շեն-ե>ի և այլն
17. Փոքրիկ- փոքր –իկ հատիկ, գնդիկ, մտերմիկ, ուլիկ, մայրիկ, հայրիկ, քույրիկ
Ժամանակ- ժամ- անակ ըմպանակ, ճոճանակ, ցուցանակ
Մշտապես միշտ-ա- պես հատկապես, լիապես, անմիջապես
Բնավորություն- բուն-ավոր- ություն հանրություն, աշակերտություն
Կեղտոտ – կեղտ-ոտ մսոտ, մրոտ, աղտոտ, յուղոտ, քամոտ, անձրևոտ
Դարձյալ- դարձ- յալ նզովյալ, օրհնյալ, նվիրյալ, սիրեցյալ
Դպրոց- դպր- ոց հնոց, մխոց, սրոց, գրոց- բրոց
Հիվանդանոց – հիվանդ- անոց ծաղկանոց, զորանոց, վարդանոց
18. Հորեղբայր, ծաղկաման, հևհև, այստեղ, այսքան, այնտեղ, դեռևս
19. Դատարկ- լիքը, ատոք, լիաբուխ,, լիուլի, առատ
Հսկա - փոքր, չնչին, աննշան
Կեղտոտ- մաքուր, անբիծ, անբասիր, անարատ, ազնիվ
Վատ- լավ, հաճելի, հիանալի, դուրեկան, ախորժելի
Սիրուն- տգեղ, անգեղ, անճոռնի
20. Մեծ սիրտ ունեցող մարդիկ ներողամիտ են, բարեգութ, երախտապարտ, բարի ու լայնսիրտ: Այսպիսի մարդկանց մասին ասում են՝«մեծ սիրտ ունի», քանի որ նրանք նախանձ ու չարակամ չեն իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ: Նրանք կարողանում են ներել իրենց մտերիմների ու ընկերների սխալները, երբեք չեն հիշեցնում իրենց կատարած որևէ լավ արարք, սիրառատ են ու առատաձեռն: Այսպիսի մարդկանց մեկ բառով կոչում են **մեծահոգի, իսկ սրանց հակապատկերը կոչվում է փոքրոգի:**

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան